

**«ՆայՌ-ուսգազարդ» ՓԲԸ**  
**2007 ԹՎԱԿԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ**  
**ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Ի ° ԾԵՁՈՒ ԶԻԶՍԻ ° Օ ° Ի Զ Ս Յ

ՆՆ ՆԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՆԱԼՁՆԱԺՈՂՈՎ

## ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն վերլուծական փեղեկանքը կազմվել է հաշվի առնելով ՏՏ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի մարտի 12-ի №85Ա որոշմամբ համաձայնեցված ներդրումային ծրագրի շրջանակներում 2007 թվականին իրականացված փաստացի ներդրումների վերաբերյալ ընկերության 2008 թվականի հունիսի 2-ի №ARG-01-14/2231 գրությամբ ներկայացված հաշվեվկությունը և դրա վերաբերյալ ներկայացված լրացուցիչ պարզաբանումները (կցվում է):

### «Ղայնուսգագարդ» ՓԲԸ-ի 2007 թվականի ներդրումային ծրագիրը

«Ղայնուսգագարդ» ՓԲԸ-ի 2007 թվականի տարեկան ներդրումային ծրագիրը հանդիսանում է ընկերության 2007-2009 թվականների եռամյա ներդրումային ծրագրի բաղկացուցիչ մասը: Ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսված էր տարբեր միջոցառումներ իրականացնել գազափոխադրման և գազաբաշխման համակարգերում՝ դրանց վերակառուցման, վերազինման, նոր բաժանորդների միացման և այլ հիմնախնդիրների լուծման նպատակով: Ներդրումներ էր նախատեսված իրականացնել նաև այդ համակարգերի շահագործման կազմակերպման և ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով՝ մեքենաների և մեխանիզմների, համակարգչային տեխնիկայի և արտադրական գույքի ու գործիքների ձեռքբերման ուղղությամբ:

Ներդրումային ծրագրով նախատեսված էր 2007-2009 թվականի ընթացքում իրականացնել 68 232,6<sup>1</sup> մլն դրամի ներդրումներ, որից 40 295,1 մլն դրամը 2007 թվականին, այդ թվում՝


- գազափոխադրման համակարգի վերակառուցման ուղղությամբ ներդրումներ՝ 900,7 մլն դրամ
- Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան կայանի վերակառուցման և ընդլայնման ուղղությամբ ներդրումներ՝ 1 427,0 մլն դրամ,
- գազափոխադրման համակարգի ընդլայնման ուղղությամբ ներդրումներ՝ 32 981,8 մլն դրամ,
- գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ 204,8

<sup>1</sup> Սույն վերլուծական փեղեկանքում նշված բոլոր գումարները չեն ներառում ԱԱՏ-ն:

- գազաբաշխման համակարգի ընդլայնման և նոր բաժանորդների միացման ուղղությամբ ներդրումներ՝ 1 816,7 մլն դրամ,
- գազաբաշխման համակարգի վերակառուցման ուղղությամբ ներդրումներ՝ 1 295,6 մլն դրամ,
- գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ 1 668,5 մլն դրամ:

Գրաֆիկ 1-ում ներկայացված է ընկերության 2007 թվականի ներդրումային ծրագրի ծավալների բաշխումը հիմնական ուղղությունների միջև:

ԳՐԱՖԻԿ 1



Ինչպես տեսնում ենք գրաֆիկ 1-ից, ներդրումների 88%-ը նախատեսվում է իրականացնել գազափոխադրման համակարգում, որից գազափոխադրման համակարգի ընդլայնման ուղղությամբ՝ ներդրումների 82%-ը, 12%-ը՝ գազաբաշխման համակարգում (որից՝ գազաբաշխման համակարգի ընդլայնման ուղղությամբ՝ 5%, գազաբաշխման համակարգի վերակառուցման ուղղությամբ՝ 3% և գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով՝ 4%):

## «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից 2007 թվականի ներդրումային գործունեության արդյունքները

Նամաձայն «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ի փաստացի իրականացված ներդրումների մասին հաշվետվության, ընկերությունը 2007 թվականի ընթացքում կարարել է 17316.6 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում շահագործման են հանձնվել 7922.0 մլն դրամի հիմնական միջոցներ (այս ծավալում ներառված է նաև 2467.0 մլն դրամ նախորդ ժամանակաշրջանում իրականացված անավարտ աշխատանքների արժեքը) և իրականացվել են 596.4 մլն դրամի ընթացիկ ծախսեր: Մնացած 8798.2 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ կամ ավարտվել են, սակայն դեռևս չեն շահագործվում:

Ստորև՝ աղյուսակ 1-ում, ներկայացված է ընկերության կողմից փաստացի իրականացված և հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալների համեմատականը:

**Աղյուսակ 1**

№	Ներդրումների ուղղությունը	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների կանխատեսվող ծավալը		Ընդամենը կատարված ներդրումներ		Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշը
		մլն դրամ	%	մլն դրամ	%	
1	2	3	4	5	6	7
1	Գազափոխադրման համակարգի վերակառուցում և վերազինում	900.7	2.2%	327.0	1.9%	36.3%
2	Գազափոխադրման համակարգի ընդլայնում	32 981.8	81.9%	6 677.8	38.6%	
3	Աբովյանի ԳՄԿ-ի վերակառուցման և արդիականացման աշխատանքներ	1 427.0	3.5%	879.3	5.1%	61.6%
4	Գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով ներդրումներ	204.8	0.5%	19.9	0.1%	9.7%
5	Գազաբաշխման համակարգի ընդլայնում և նոր բաժանորդների միացում	1 816.7	4.5%	4 509.6	26.0%	248.2%
6	Գազաբաշխման համակարգի վերակառուցում և վերազինում	1 295.6	3.2%	2 625.3	15.2%	202.6%
7	Գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով ներդրումներ	1 668.5	4.1%	1 640.3	9.5%	98.3%
8	Այլ ներդրումներ			637.5	3.7%	
9	<b>Ընդամենը՝ առանց գազափոխադրման համակարգի ընդլայնման աշխատանքների</b>	<b>7 313</b>		<b>10 638.9</b>		<b>145.5%</b>
10	<b>Ընդամենը</b>	<b>40 295</b>		<b>17 316.6</b>		

Նարկ ենք համարում նշել, որ գազափոխադրման համակարգի ընդլայնման ուղղությամբ փաստացի իրականացված ներդրումների ծավալը ամբողջովին չի արտացոլվել իրականացված ներդրումների վերաբերյալ հաշվեպվությունում (ձեռք են բերվել Իրան-Նայասպան գազափոխի խողովակաշարերը, որոնց արժեքը՝ հաշվի առնելով, որ դրանք դեռևս փեղակայված չեն, չի արտացոլվել իրականացված ներդրումների ծավալում): Ուստի ներդրումային ծրագրի կարարման ցուցանիշը դիտարկվել է առանց հաշվի առնելու նշված ուղղությամբ ներդրումների կարարման ցուցանիշը:

Ստորև՝ աղյուսակ 2-ում, ներկայացված են իրականացված ներդրումների ձևավորման աղբյուրները:

**Աղյուսակ 2**  
**մլն դրամ**

	Ներդրումների ձևավորման աղբյուրները	Կապիտալացված և հեարագա կապիտալացման ենթակա ծախսեր	Ընթացիկ ծախսեր	ԸՆԴԱՄԵՆԸ
1	2	3	4	5
1	Նախորդ ժամանակահատվածում իրականացված ներդրումներից	2 467.0	0.0	2 467.0
2	Կողմնակի կազմակերպությունների միջոցով կարարված աշխատանքներից	10 731.0	290.0	11 021.0
3	Տեղակայում չպահանջող հիմնական միջոցներից	257.0	0.0	257.0
4	Սեփական ուժերով կարարված աշխատանքներից	3 265.2	306.5	3 571.6
4.1	<i>ՅԵՅ ի Յ ի Յ ղՕ .. ԵձՕՇՅ ԷՅ ԻՅ Կ Յ Գ Յ Նձձ ԳձՁՅ Կ ԻՅ ԷԵ»ղ</i>	514.2	93.2	607.4
4.2	<i>ՆձձՍ .. ԿղձՁ»ղ</i>	1 670.6	202.5	1 873.1
4.3	<i>ի »ՕՅ ԻՅ ՁՅ Կ »ԿՁՅ ԻՅ ԵՅ ղնՅ ի ԳղձՁՍՂ»ղ</i>	980.0	0.0	980.0
4.4	<i>Յ Ձ</i>	100.4	10.7	111.1
5	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>16 720.2</b>	<b>596.5</b>	<b>17 316.6</b>

Ինչպես փեսնում ենք աղյուսակ 2-ից, ընկերությունը 2007 թվականին ներդրումների իրականացման նպարակով ներգրավել է 17316.7 մլն դրամ գումար, որից մոտ 96.6 %-ը հանդիսանում է կապիտալացման և հեարագայում կապիտալացման ենթակա աշխատանքների արժեքը, իսկ 3.4%-ը ընթացիկ ծախսերով ձևակերպված աշխատանքների արժեքը: Ներդրումների մեծ մասը՝ մոտ 63.6%-ը, իրականացվել է

այլ կազմակերպությունների միջոցով: Սեփական ուժերով կապարված ներդրումների ծավալը կազմել է ընդհանուրի մոտ 20%-ը:

Արդյունքում ներդրումային ծրագրի կապարման ցուցանիշը կազմել է 145.5%, որը արդյունք է գազաբաշխման ցանցի շինարարության և նոր բաժանորդների միացման ուղղությամբ նախատեսված ներդրումների ծավալի գրեթե 250%-ով գերազանցման:

### **«ՉայՌուսգազարդ» ՓԲԸ-ի հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը**

Ստորև, առավել հանգամանալից ըստ ուղղությունների, ներկայացված են ընկերության կողմից 2007 թվականին իրականացված ներդրումների ծավալները հեթազայում դրանք սակագնով ամբողջությամբ կամ մասնակի փոխհատուցման տեսանկյունից: Նարկ ենք համարում նշել, որ սույն վերլուծական տեղեկանքում սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ներկայացված ծավալը վերջնական չէ և հեթազայում կարող է ճշգրտվել մոնիթորինգի իրականացման արդյունքներով:

Իրականացված ներդրումների կազմում ընթացիկ ծախսերով ձևակերպված ներդրումները իրենցից ներկայացնում են գազատարերի և գազահաշվիչների, թվով 292 ավտոտրանսպորտային միջոցների, համակարգչային տեխնիկայի, գրասենյակային գույքի և այլ հիմնական միջոցների ընթացիկ նորոգման ծախսեր: Նշված ծախսերը սակագնում ներառվող ընթացիկ ծախսեր են, ուստի դրանք ամբողջ ծավալով ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցվող ներդրումների ծավալից:

### **Գազափոխադրման համակարգի վերակառուցում և վերազինում**

Գազափոխադրման համակարգի վերակառուցման և վերազինման ուղղությամբ նախատեսվում էր իրականացնել 900.7 մլն դրամի ներդրումներ՝ մայրուղային գազատարերի շինարարություն, գազատարերի բացված հատվածների վերականգնման և ամրացման, գազաբաշխիչ կայանների շինարարության, չափիչ հանգույցների արդիականացման, էլեկտրապաշտպանիչ կայանների, գծային փականների վերազինման և նորերի տեղադրման, ինչպես նաև գազափոխադրման համակարգում հաշվառման համակարգի արդիականացման նպատակով:

Ընկերությունն այս ուղղությամբ իրականացրել է 327.0 մլն դրամի ներդրումներ՝ նախատեսվածի 36.3%-ը, որի արդյունքում ավարտվել են 238.9 մլն դրամի աշխա-

տանքներ, որից 1.5 մլն դրամի փաստացի կատարված ներդրումները ձևակերպվել են ընթացիկ ծախսերով: 88.1 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ:

Այս ծավալում 25.1 մլն դրամը անհետաձգելի աշխատանքների իրականացման նպատակով կատարված ներդրումներ են:

Նշված ուղղությամբ իրականացված ներդրումների ծավալում 41.2 մլն դրամ (ավարտված) արժեքով աշխատանքներ նախատեսված չեն ներդրումային ծրագրով և ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից. Մասնավորապես.

Լաջին Չափիչ Նանգույց տեղափոխում	20.2 մլն դրամ
Իլիջևսկ-Երևան D=700 գ/տ 77.3 կմ գծային փականի փոխարինում	6.3 մլն դրամ
Ղազախ-Երևան D=720մմ գ/տ (109-121կմ) վերականգնում	4.4 մլն դրամ
Ղազախ-Երևան մ/գ Փ-1020մմ 47 կմ վերակառուցում	9.0 մլն դրամ
Ղազախ-Երևան մ/գ Փ-720մմ 98-108 կմ վերակառուցում	1.3 մլն դրամ
<b>Ընդամենը</b>	<b>41.24 մլն դրամ</b>

Բացի վերը նշվածը սակագնով փոխհատուցվող ներդրումների ծավալից ենթակա է նվազեցման հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցող չհիմնավորված 11.5 մլն դրամի ներդրումները:

**Արոլյանի գազի ստորգերնյա պահեստարան-կայանի վերակառուցման և արդիականացման նպատակով նախատեսված ներդրումներ**

2007 թվականին Արոլյանի գազի ստորգերնյա պահեստարան-կայանի ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 1427.0 մլն դրամ գումար: Փաստացի ներդրվել է 879.3 մլն դրամի գումար՝ նախատեսվածի 61.6%-ը, որի արդյունքում ավարտվել են 692.8 մլն դրամի աշխատանքներ (185 մլն դրամը ընթացիկ ծախսերով): Արդյունքում կառուցվել է մեկ աղաջրագիծ և մեկ աղաջրապահեստարան: Նարկ ենք համարում նշել, որ չնայած այս ուղղությամբ կատարված ներդրումների ծավալին կատարված աշխատանքները հիմնականում չեն համընկնում ներդրումային ծրագրով նախատեսված ուղղությունների հետ:

## **Գազափոխադրման համակարգի ընդլայնում**

Գազափոխադրման համակարգի ընդլայնման ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 32981.8 մլն դրամ: Փաստացի իրականացված ներդրումների ծավալը, համաձայն ներկայացված հաշվեքվության, կազմել է 6677.8 մլն դրամ: Ինչպես արդեն նշվեց, գրեթե անբողջությամբ ձեռք են բերվել Իրան-Նայասպան գազափոխադրման խողովակաշարերը, որոնց արժեքը չի արբացովել իրականացված ներդրումների վերաբերյալ հաշվեքվությունում: Այս ուղղությամբ իրականացված բոլոր ներդրումները 01.01.2008թ. դրությամբ անավարտ են:

## **Գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով ներդրումներ**

Գազափոխադրման համակարգի համար նախատեսվում էր ձեռք բերել 11 միավոր մեքենա-մեխանիզմներ (այդ թվում մեկ շարժական լաբորատորիա), սպու-գարկիչներ, դյուրափոխ համակարգիչներ, ռադիոտելեական կապի սարքավորումներ և այլն: Այս ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 204.8 մլն դրամ: Փաստացի ներդրվել է 19.9 մլն դրամ գումար՝ նախատեսվածի 9.7%-ը, որից 2.3 մլն դրամը ծախսվել է դյուրակիր համակարգիչների ձեռքբերման ուղղությամբ: Մնացած 17.7 մլն դրամի ներդրումները իրականացվել են ներդրումային ծրագրով չնախատեսված մեքենաների վերանորոգման և վերասարքավորման ուղղությամբ, և ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցվող ներդրումների ծավալից:

## **Գազաբաշխման համակարգի ընդլայնում և նոր բաժանորդների միացում**

Այս նպատակով 2006 թվականին նախատեսվում էր իրականացնել 1816.7 մլն դրամի ներդրումներ, որից 416.7 մլն դրամը գազաբաշխման ցանցի ընդլայնման, իսկ 1400.0 մլն դրամը նոր բաժանորդների միացման նպատակով: Պետք է ավարտվեին նախկինում սկսված սակայն անավարտ գազափոխադրման շինարարությունը և գազաբաշխման ցանցին միացվեին 50 000 նոր բաժանորդներ: Փաստացի իրականացված ներդրումների ծավալը կազմել է 4509.6 մլն դրամ՝ (այս ծավալում 1242.4 մլն դրամը իրականացվել է նախորդ ժամանակաշրջանում) նախատեսվածի 248.2%-ը: Իրականացված ներդրումների արդյունքում ավարտվել են 2258.6 մլն դրամի գազափոխադրման կառուցման և վերափոխադրման աշխատանքներ, ինչպես նաև սպառողների համար փեղակայվել են 2039.5 մլն դրամի հաշվառման համալիրներ: 211.6 մլն դրամի աշխատանքներ մնացել են անավարտ:



2007 թվականի ընթացքում գազաբաշխման ցանցին են միացվել նոր 77 479 բաժանորդներ և ընկերության բաժանորդների ընդհանուր քանակը կազմել է 516 272: Բացի այդ շուրջ 137 870 փնային փնտեսություններ առանց նոր գազափարներ կառուցելու հեղափոխում կարող են միանալ գազաբաշխման ցանցին՝ փեղադրելով միայն հաշվառման համալիրներ:

### **Գազաբաշխման համակարգի վերակառուցում և վերազինում**

Գազաբաշխման համակարգի վերակառուցման և վերազինման նպատակով նախատեսվում էր իրականացնել գազափարերի վերականգնման, էներգամատակարարման և հաշվառման համակարգերի արդիականացման, էլեկտրապաշտպանիչ կայանների փեղակայման և այլ աշխատանքներ: Այս ուղղությամբ պետք է ներդրվեր 1295.6 մլն դրամ: Փաստացի ներդրվել է 2625.3 մլն դրամ՝ նախատեսվածի 202.6%-ը: Իրականացված ներդրումների արդյունքում ավարտվել են 1704.6 մլն դրամի աշխատանքներ: Ներդրումների այս ծավալում ևս առկա են 315.5 մլն դրամի ընթացիկ ծախսեր, որոնք ամբողջովին նորոգման ծախսեր են:

Նշված ուղղությամբ իրականացված ներդրումների ծավալում 10.8 մլն դրամ ընդհանուր ծավալով (ավարտված) աշխատանքներ նախատեսված չեն ներդրումային ծրագրով և ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից. Մասնավորապես.

Կենցաղային գազահաշվիչների փեղափոխում	8.55 մլն դրամ
Գործիքներ	2.25 մլն դրամ
<b>Ընդամենը</b>	<b>10.8 մլն դրամ</b>

### **Գազաբաշխման համակարգի շահագործման և սպասարկման ծառայությունների ոլորտներում ներդրումներ**

Գազաբաշխման համակարգի շահագործման և սպասարկման ծառայությունների ոլորտում ներդրումներ պետք է իրականացվեին հետևյալ ուղղություններով՝

- շենքերի և շինությունների բարեկարգում,
- մեքենա-մեխանիզմների ձեռքբերում և վերասարքավորում,
- համակարգչային փոխնիկայի և աքսեսուարների ձեռքբերում,
- անվտանգության համակարգերի արդիականացում,
- կապի համակարգի բարելավում:

Շենքերի և շինությունների բարեկարգման ուղղությամբ իրականացվել են 1207.2 մլն դրամի ներդրումներ՝ նախատեսվածի 124.5%-ը: Ընդհանուր առմամբ ավարտվել են 1143.6 մլն դրամի շենքերի և շինությունների բարեկարգման աշխատանքներ:

Գազափոխադրման և գազաբաշխման համակարգում մեքենա-մեխանիզմների ձեռք բերման և վերասարքավորման ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 433.8 մլն դրամ: Ընկերությունը 2006 թվականի ընթացքում ներդրել է 204.1 մլն դրամ՝ նախատեսվածի 47%-ը: Այս ծավալում 57 մլն դրամը վարչական ապարատի համար ձեռքբերված մարդապար մեքենաներն են, որոնք ներդրումային ծրագրով նախատեսված չեն:

Անվտանգության համակարգերի արդիականացման ուղղությամբ նախատեսվում էր ձեռք բերել բարձր զգայունության փնտրիչ սարք, կառավարման պահեստային կապի վահանակ և 800 ՄՆց հաճախականության ռադիոհեռախոսներ: Սակայն փաստացի իրականացված ընդհանուր 4.8 մլն դրամ արժեքով ներդրումները ամբողջությամբ ուղղվել են կրակմարիչների ձեռքբերմանը:

Կապի համակարգի բարելավման ուղղությամբ 2007 թվականի ընթացքում նախատեսված էր 123.4 մլն դրամի ներդրումներ, սակայն այդ ուղղությամբ ներդրումներ չեն կատարվել:

132.5 մլն դրամ ընդհանուր արժեքով ներդրումներ են իրականացվել գրասենյակային կահույքի և կենցաղային փեխնիկայի և այլ գործիքների ձեռք բերման նպատակով, որոնք հանձնաժողովի հետ համաձայնեցված չեն եղել:

Գազաբաշխման համակարգի շահագործման և սպասարկման ծառայությունների ոլորտներում իրականացված (ավարտված) ներդրումների ծավալում 223.2 մլն դրամ ընդհանուր ծավալով աշխատանքներ նախատեսված չեն ներդրումային ծրագրով և ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից. Մասնավորապես.

Ժամանակակից փեխնիկայի և փեխնոլոգիա ձեռքբերում	2.7 մլն դրամ
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	38.1 մլն դրամ
Մարդապար մեքենաների ձեռքբերում	57.0 մլն դրամ
Կրակմարիչների ձեռքբերում	4.8 մլն դրամ
Գրասենյակային գույք և այլ հիմնական միջոցներ	120. 6 մլն դրամ
<b>Ընդամենը</b>	<b>223.2 մլն դրամ</b>

Սակագնով փոխհարուցման ենթակա ներդրումների ծավալից պետք է նվազեցնել նաև շենք-շինությունների վերականգնման և համակարգչային տեխնիկայի ձեռքբերման ուղղությամբ իրականացված հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցող չհիմնավորված ներդրումները՝ 193.4 մլն դրամ ընդհանուր ծավալով:

Բացի վերը նշվածը 637.5 մլն դրամի ներդրումներ են իրականացվել նաև «Նրազդանի ՋԷԿ»-ի 5-րդ էներգաբլոկում: Այս ուղղությամբ իրականացված ավարտված ներդրումների ծավալը՝ 0.7 մլն դրամ, ենթակա է նվազեցման սակագնով փոխհարուցվող ներդրումների ծավալից, քանի որ այս աշխատանքը չի բխում ընկերության լիցենզավորված գործունեությունից:

Սակագնով փոխհարուցման ենթակա ներդրումների ծավալի ամփոփ վերլուծությունը ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

1	<b>2007 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՅՐԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ</b>	<b>17316.6</b>	
2	<b>2007 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՅՐԱԾ ԱՆԱՎԱՐՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ</b>	<b>8798.1</b>	
3	<b>2007 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՅՐԱԾ ԱՎԱՐՏՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ</b>	<b>8518.5</b>	
4	<b>Նանձնաժողովի աշխատակազմի կողմից ջնդրված ներդրումների ծավալը, այդ թվում՝</b>	<b>1105.6</b>	ենթակա չէ փոխհարուցման սակագնով
4.1	<b>Նանձնաժողովի հետ չհամաձայնեցված ներդրումների ծավալը, այդ թվում՝</b>	<b>304.2</b>	ենթակա չէ փոխհարուցման սակագնով
4.1.1	մայրուղային գազափարերի կառուցում, վերափրկադրում և փոխարինում	51.8	
4.1.2	մեքենաների ձեռքբերում	17.7	
4.1.3	վթարային ծրագրով կենցաղային գազահաշվիչների տեղափոխում և մուտքագծերի տեսանելիության ապահովում	8.55	
4.1.4	փականագործական և էլեկտրականության գործիքներ	2.25	
4.1.5	գազաբաշխման համակարգի ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրում	2.7	
4.1.6	ոչ նյութական ակտիվներ	38.1	
4.1.7	վարչական ապարատի համար մարդաբար մեքենաներ	57.0	
4.1.8	կրակմարիչների ձեռքբերում	4.8	
4.1.9	գրասենյակային գույքի ձեռքբերման, «Նրազդանի ՋԷԿ»-ի 5-րդ էներգաբլոկի կառուցման և հանձնաժողովի հետ չհամաձայնեցված այլ ուղղություններով ներդրումներ	121.3	

4.2	<b>Ընթացիկ ծախսերով ձևակերպված ընթացիկ նորոգման աշխատանքներ</b>	<b>596.4</b>	ենթակա չէ փոխհարուցման սակագնով
4.3	<b>Նանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցող չհիմնավորված ներդրումներ</b>	<b>204.9<sup>2</sup></b>	ենթակա չէ փոխհարուցման սակագնով
5	<b>2007 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից սակագնով փոխհարուցման ենթակա ծավալը</b>	<b>7412.9</b>	

## **ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ**

Ամփոփելով «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ի 2007 թվականի ներդրումային գործունեության արդյունքները հարկ ենք համարում նշել, որ չնայած ներդրումային ծրագրի կատարման բարձր ցուցանիշին, ներդրումային ծրագրով նախանշված և փաստացի իրականացված ներդրումների ուղղություններում առկա են էական շեղումներ: Դրա հիմնական պատճառներից է նախորդ տարիների ներդրումային ծրագրերի շրջանակում հանձնաժողովի հետ համաձայնեցված, սակայն անավարտ մնացած աշխատանքների արժեքը 2007 թվականի ներդրումային ծրագրի կազմման ընթացքում հաշվի չառնելու հանգամանքը: Այս առումով անհրաժեշտ ենք համարում ընկերության ուշադրությունը հրավիրել ներդրումային ծրագրերի կազմման գործընթացի վրա՝ դրանց իրապեսականությունը բարձրացնելու առումով և հարկ ենք համարում նշել նաև, որ հաջորդ տարիներին սակագնով փոխհարուցման ենթակա ներդրումների ծավալում կներառվեն միայն փյույթ փարվա համար հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումները՝ առանց հաշվի առնելու դրանց նախկինում համաձայնեցված լինելու հանգամանքը:

<sup>2</sup> այս ծավալում հաշվի չի առնվել գազաբաշխման ցանցի շինարարության, նոր բաժանորդների միացման և գազաբաշխման ցանցի վերակառուցման ուղղություններով իրականացված ներդրումների գերազանցումները: